ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2024 թվականի թիվ 71 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 289-Ն ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 2323-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 289-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումները և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 289-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումներով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 549000.0 հազար դրամ գումարից 100473,583 հազար դրամ վճարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 67026,417 հազար դրամ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ մարզի սահմանամերձ համայնքների բնակավայրերի էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից սպառած 2023 թվականի դեկտեմբեր, 2024 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-03-25 16:07:16 GMT+4
Հաստատված է ԷԿԵՏՀ-ի կողմից

mID

ք. Իջևան
25 մարտի 2024թ.